Հաշվետվություն

*ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի գյուղապետարանի **2012 թ-ի հունվարի 1-ից** մինչև **հուլիսի 1-ը** կատարած աշխատանքների վերաբերյալ.*

- Ընթացիկ ժամանակահատվածում անցկացրել ենք ավագանու երեք նիստ, կայացրել ենք որոշումներ, պատասխանել դիմումներին և գրություններին:
- Վճարել ենք գյուղապետարանի աշխատողների աշխատավարձը, չունենք աց. վճարների և աշխատավարձի պարտքեր:
- Կիսամյակի ընթացքում հողի հարկի հավաքագրման ցուցանիշը կազմում է 83.7%, իսկ գույքահարկինը 74.1%, վարձակալական հողի վճարը 50.8%:
- Նխորդ տարվա համեմատ ծանր է հարկերի հավաքագրման գործընթացը, որի կարգավորման համար կենտրոնացրել ենք գյուղապետարանի և ավագանու ուժերը ցուցանիշը մինչև տարվա վերջ բարելավելու նպատակով:
- Կազմակերպված ձևով նախապատրաստվել ենք գարնան գյուղատնտեսական աշխատանքներին :
- Ժամանակին մաքրվել և վերանորոգվել է ներքին ոռոգման համակարգը:
- Համագործակցում ենք «ԽՈՅ» ջրամատակարար ընկերության հետ՝ համայնքը մշտական ոռոգման ջրով ապահովելու համար:
- Ստեղծվել է ժամանակավոր հանձնաժողով համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որը զբաղվում է ցորենի հնձի աշխատանքների կազմակերպման և հարկերի հավաքագրման գործընթացով:
- Համայնքի բազմաթիվ ընտանիքներ օգտվում են «Հայգյուղտեխբանկի» վարկային ծրագրից, որում իր մասնակցությունը ունի գյուղապետարանը:
- 2012թվականի 2-րդ կիսամյակում հիմնովին կլուծվի համայնքի գազաֆիկացման խնդիրը:
- Ջրմուղ կոյուղու աշխատակիցների կողմից կատարվել է համայնքի խմելու ջրի ցանցի ուսումնասիրություն և համայնքը ներկայացվել է ներդրումային ծրագրի շրջանակում հարցը լուծելու գործընթացին:
- Չնայած համայնքի առջև ծառացած կարևորագույն կենսական խնդիրները կամաց-կամաց իրենց լուծումն են ստանում, սակայն դեռ կան չլուծված հարցեր, ինչպիսիք են խմելու ջուրը, դպրոցը, միջհամայնքային ճանապարհը, որոնք միշտ էլ եղել են գյուղապետի և գյուղապետարանի աշխատակիցների ուշադրության կենտրոնում, որոնց էլ փորձում ենք լուծում տալ մարզպետի անմիջական աջակցությամբ:

Համայնքի ղեկավար՝ / _____ / *Ն. Հայրապետյան*
(ստորագրություն)